ֆայի (Զուղայի) երկաթգծի համար կատարված ժայռաքանդ աշխատանքները մարդիկ և գրաստներն անցյալում տեղափոխվում էին մի նեղ շավիղով, որը բարձրանում էր կիրճի ապառաժոտ ուղղաձիգ կողով։ Մեղրու այդ կիրճով մուտքն Արարատյան դաշտից դեպի Զանգեզուրի եռանկյունին չափազանց դժվար էր, թեև հարմար կլիմայական պայմանները տարվա բոլոր եղանակներին նպաստավոր են։ Ագուլիս-Օրդուբադից Կարճևանի և Մեղրու հովիտները տեղափոխվելու համար հնում գերադասում էին անցնել Կոնգուր-Ալանգյազի, այժմյան Զանգեզուրի, լեռնաշղթայի հարավային մասի համեմատաբար տափակ սեռի վրայով։

Այսպիսով Զանգեզուրի եռանկյունու արևմտյան շրջանակը մինչև Միսիանի-Բիչենաղի (Բիչենաղի) լեռնանցքն իր հյուսիսային հատվածումն է միայն հարմարություն ներկայացնում արևմտյան և արևելյան կողմերի փոխադարձ հաղորդակցության համար, իսկ հարավային հատվածում հանդիսանում է դժվարահաղթ պատվար, որով թե՛ Մեղրու գավառակը և թե՛ Ողջիի (Օխչիի) գետահովիտը (Կապանը) ամուր պաշտպանված են արևմուտքից ուղղված ներխուժումների դիմաց։

Բոլորովին տարբեր բնույթ ունի Զանգեզուրի եռանկյունու արևելյան կողը։ Այստեղ հենց հյուսիսային հատվածն է արգելքներ ստեղծում Կուրի ստորին հովտից բարձրացող մարդահոսանքների համար, իսկ հարավային հատվածն ավելի մատչելի է, որտեղ Ղարաբաղի բարձրավանդակը սկիզբ առնելով Զանգեզուրի լեռնաշղթայի՝

Սըրյեր-Սառչայի, այժմ Սառցալի—3 632 մ լեռնագագաթի մոտից ուղղվում է արևելք և

Ուջևան (Դալի դաղ) լեռը—3 632 մ,

Մըխթեքյան—3 614 մ և

Ջիլգյազ—2 372 մ գագաթներով հասնում է

Ալակայա—2 583 մ գագաթին, որից հետո շեղվում է հարավ արևելյան ուղղությամբ և

Ղըրխ-ղրզ—2 564 մ,

Սաղսաղան—2 160 մ և

Մեծ Քիրս—2 725 մ գագաթներով մոտենում է

Դիզափայտին (Զիարաթին)—2 496 մ և ապա դարավանդներով փովում է դեպի Արաքս։

Լեռնաշղթայից մինչև Ալակայա հատվածը բաժանում է Ղարաբաղի՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակը հյուսիսից նրան կցվող Տրտու (Թարթառ) գետի բարձրադիր վերնագավառից, որը կտրտված է անդնդախոր ծործորներով և զառիթափ անձուկներով։ Այս հատվածում թամքոցները բազմաթիվ են և ցածրադիր, բայց Տրտուի (Թարթառի) կողմից նրանց հասնելը շատ դժվարացած է։ Ալակայայից մինչև Դիզափայտ լեռնաշղթայի հարավային լանջերը կարճ են, բայց գրեթե ուղղաձիգ։ Լանջերը իջնում են դեպի Ղարաբաղի Հրաբխային բարձրավանդակը, իսկ հյուսիսային լանջերին՝ դեպի Կուր գետը ձգվում են երկար լեռնաբազուկներ։ Սրանց մեջ գոյացած հովիտներով վերելքը Մերձկասպյան տափաստաններից դեպի սեռը թեև դյուրին է, սակայն մուտքերը հնարավոր է հեշտությամբ կապել հովիտների նեղացող բերանների մոտ։ Այս հատվածում կան մի քանի լեռնանցքներ։